ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #44

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

ՄԱՐՏ 2021

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ ԱՄՍԱԳԻՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏՎՅԱԼ ԱՄՍՈՒՄ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ԷՋ 2

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԷՋ 10

ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՎ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2021թ.-ի ապրիլի 1-ից մեկնարկում է «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության ՄԻԱՎ-ին հակազդման ազգային ծրագրում չներառված խոցելի խմբերի շրջանում» ծրագիրը:
Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում Գլոբալ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում չներառված ռիսկային խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելմանը և տեղեկատվության բարձրացմանը, ջատագովել տվյալ ծրագրերում նշված խմբերի ներգրավման, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում շահառու խմբերի համար ՄԻԱՎ-ի վերաբերյալ ծառայությունների հասանելիության ապահովման համար:

ԷՋ 5

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Դատարանի վճռով ամբաստանյալը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում և դատապարտվեց ազատազրկման 3 տարի, 6 ամիս ժամկետով:

ԷՋ 3

ԸՆԴԴԵՄ BLOGNEWS.AM ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՏԵՐ-ՆԱԿԱԼՅԱՆԻ, 5-ՐԴ ԱԼԻՔ /«ՇԱՐԿ» ՍՊԸ-Ի, ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

2021թ.-ի մարտի 5-ին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունու նստավայրում, դատավոր Տաթևիկ Ստեփանյանի նախագահությամբ տեղի ունեցավ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն ընդդեմ BlogNews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանի, 5-րդ ալիք/ «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի, Արթուր Դանիելյանի գործով հերթական դատական նիստը:

ԷՋ 7

ԴԱՍԸՆԹԱՑ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հետ համագործակցությամբ նման ձևաչափով դասընթացներ է կազմակերպում դեռևս 2019 թվականից և այս համագործակցությունը լինելու է շարունակական:

ԷՋ 9

ՄԻԱՎ-Ը ԴԱՏԱՎՃԻՌ ՉԷ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն»-ի, տեղական հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համայնքահեն ՀԿ-ների և համայնքի ներկայացուցիչներ, ովքեր բարձրաձայնեցին իրենց անհանգստացնող հարցերը և ստացան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2021թ.-ի մարտի 11-12-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի ներկայացուցիչները մասնակցում էին Հայաստանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրային և ֆինանսական հաշվետվական ձևերի վերաբերյալ արտագնա աշխատաժողովին:

Աշխատաժողովը կազմակերպվել էր Հայաստանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ուղղված, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ենթաստացող կազմակերպությունների կողմից ներկայացվող ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև՝ այլ ընթացիկ աշխատանքային հարցեր քննարկելու նպատակով:
Աշխատաժողովը մեկնարկեց ՀՀ ԱՆ Գլոբալ Հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ծրագրերի համակարգող Լիլիթ Խաչատրյանի և ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Մադոյանի ողջույնի խոսքերով:

Այնուհետև հաջորդեցին ԳՀ տարեկան ծրագրային ցուցանիշների ամփոփումները «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի», «Թոքաբանության ազգային կենտրոնի», Հայկական Կարմիր խաչի ընկերության, «Քրեակատարողական բժշկության կենտրոնի» և «Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի» կողմից:
Աշխատաժողովի առաջին օրվա երկրորդ կեսը նվիրված էր հաղորդակցական հմտություններին, մասնավորապես էլեկտրոնային նամակագրությանը, ֆինանսական և նկարագրողական հաշվետվական ձևերի ներկայացմանը:
Հանդիպման առաջին օրը եզրափակվեց ԳՀ դրամաշնորհային ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանի ձևաչափի խմբային աշխատարան-քննարկումով և մշակված պլանների ներկայացումներով:

Աշխատաժողովի երկրորդ օրը մեկնարկեց ֆինանսական հաշվետվական ձևերի խմբային աշխատարան քննարկումով, որից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացրեց հաշվետվական ձևերի բարելավման առաջարկներ:

Այնուհետև քննարկվեցին և առաջարկներ ներկայացվեցին նաև ծրագրային նկարագրողական հաշվետվությունների վերաբերյալ: Հաջորդիվ, ներկայացվեցին ԳՀ-ի «Հիմնական միջոցների կառավարման» նոր ուղեցույցները, տեղի ունեցավ ՀԿ-ների տվյալների բազայի քննարկում:

Հանդիպումը եզրափակվեց հարց ու պատասխանով, ծրագրային նկարագրողական և ֆինանսական հաշվետվությունների որակը բարձրացնելու առաջակությունների փաթեթի մշակումով:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴՊՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

2021թ. մարտի 2-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանը որպես բանախոս մասնակցում էր ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրներին նվիրված հանդիպում-քննարկմանը:
Հանդիպմանը հրավիրված էին Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ-ում առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հերիքնազ Տիգրանյանը, ԻՀԱԿ տնօրենի ժ/պ Հովհաննես Մադոյանը, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի Հայաստանյան ներկայացուցիչ Ռոզա Բաբայանը, ԻՀԱԿ մասնագետները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:
Քննարկման ընթացքում վեր հանվեցին ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խտրականության դեպքերը, օրենսդրական բացերը և առաջարկվեցին քայլեր, որոնք միտված են խտրականության նվազեցմանը: Հանդիպմանը ներկայացվեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը ՀՀ-ում և ոլորտին առնչվող այլ թեմաներ:

Շուշան Խնկոյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԼԳԲՏ անձանց նկատմամբ 2020թ.-ին արձանագրված խտրականության դեպքերը, անդրադարձ կատարեց օրենսդրական մակարդակով սահմանափակումներին և խտրական տերմիններին:

Հանդիպում-քննարկումը կազմակերպվել էր ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի, ԻՀԱԿ-ի և «Իրական աշխարհ իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից «Խտրականության դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում:

ԸՆԴԴԵՄ BLOGNEWS.AM ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՏԵՐ-ՆԱԿԱԼՅԱՆԻ, 5-ՐԴ ԱԼԻՔ / «ՇԱՐԿ» ՍՊԸ-Ի, ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Ստորև նշված գործով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հանդես է գալիս որպես «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի շահերը ներկայացնող, փաստաբանական աջակցություն տրամադրող կազմակերպություն:

2021թ.-ի մարտի 5-ին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունու նստավայրում, դատավոր Տաթևիկ Ստեփանյանի նախագահությամբ տեղի ունեցավ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն ընդդեմ BlogNews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանի, 5-րդ ալիք/ «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի, Արթուր Դանիելյանի գործով հերթական դատական նիստը: Քանի որ նախորդ դատական նիստին դատարանը կայացրել էր ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում, անցում կատարվեց դատաքննության փուլին:

Փաստաբան Անահիտ Մկրտչյանի կողմից ներկայացվեց հայցադիմումը՝ դրանում առկա փաստական հանգամանքներով և իրավական վերլուծությամբ: Դատաքննության փուլում հնչեցին հայտարարություններ, հարցեր, որոնց սպառիչ պատասխանների համար անհրաժեշտություն առաջացավ դատարանին ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր:

Նիստը հետաձգվեց: Հաջորդ դատական նիստը տեղի կունենա 2021թ.-ի ապրիլի 30-ին, ժամը 16:00-ին՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրում:

Գործի նախապատմությունը

2019թ. ապրիլի 05-ին 5-րդ ալիք/ 5TV-ի Դեմ Դիմաց» հաղորդման հերթական եթերում Blognews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանը արել է կեղծ հայտարարություն՝ պնդելով, որ «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն Կոտայքի մարզի դպրոցում ԼԳԲՏ քարոզչություն է իրականացրել:

Հաջորդ օրը 06.04.2019թ.-ին «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել էր «Հերքման պահանջ»՝ ուղղված Կոնստանտին Տեր-Նակալյանին: 2019թ.-ի ապրիլի 12-ին «ԱԴԵԿՎԱԴ» անվամբ ֆեյսբուքյան էջում տեսանյութ է տեղադրվել «Բոլոր գեյապաշտ, ադրբեջանամետ քայլառաստներից ներողություն ենք խնդրում» վերնագրով: Նույն օրը՝ ժամեր անց Կոնստանտին Տեր-Նակալյանն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է տեսահոլովակ «Ներողության հերթական փորձը Grigor Yeritsyanից» վերնագրով, որը, ինչպես նախորդ փորձը, իր էությամբ չէր համապատասխանում օրենքով ամրագրված հերքման չափորոշիչներին:

Օրեր անց՝ 17.04.2019թ.-ին Կոնստանտին Տեր-Նակալյանը կրկին իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է «Երիցս ներողություն, Grigor Yeritsyan… Ներողություն անձամբ իմ ու Artur Danielyanի կողմից» վերնագրով տեսահոլովակ, որում դիմում են Գրիգորի Երիցյանին ծաղրանքով, վիրավորանքներով և նշում, որ առաջիկայում ևս դրսևորելու են նման վարքագիծ: Վերը նշված շարունակական գործողությունների արդյունքում վնաս է պատճառվել «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ի գործարար համբավին, ինչի վերականգնման նպատակով հայցադիմում էր ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ BlogNews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանի, 5-րդ ալիք/ «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի և Արթուր Դանիելյանի:

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ. ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՄՆԱ ԱՆՓՈՓՈԽ

2021թ.-ի մարտի 9-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում դատավորներ Կարեն Մաթևոսյանի, Արթուր Առաքելյանի և Քրիստինե Մկոյանի նախագահությամբ ավարտվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ տեղեկատվության տրամադրման պարտավորեցման պահանջի մասին գործով ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննությունը:

Որոշմամբ Դատարանը մերժեց ՀՀ ոստիկանության ներկայացրած բողոքը և ՀՀ վարչական դատարանի 2019թ-ի հունիսի 20-ի որոշումը թողեց անփոփոխ:

Այն օրինական ուժի մեջ կմտնի հրապարակելու պահից մեկ ամիս հետո:

Գործի նախապատմությունը

2018թ. օգոստոսի 14-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ՀՀ Ոստիկանություն է ուղարկվել գրություն՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԲՀԿ խմբակցության անդամ Գևորգ Պետրոսյանի կողմից 06.08.2018թ. Ֆեյսբուքյան հարթակում ատելություն սերմանող գրառումներ կատարելու փաստի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու և համապատասխանաբար քրեական գործ հարուցելու համար:

2018թ. հոկտեմբերի 15-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ՀՀ Ոստիկանություն է ուղարկվել գրություն՝ ՀՀ քաղաքացի Արագած Ախոյանի կողմից դրսևորված վարքագծի /սպառնալիքներ, ատելության կոչեր/ վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու և համապատասխանաբար քրեական գործ հարուցելու համար:

Գրությունների ընթացքի, քրեական գործի հարուցման, այն ըստ ենթակայության ուղարկելու կամ մերժելու մասին որևէ տեղեկություն Կազմակերպությանը չի տրամադրվել: Ավելին, գրությունների ընթացքի վերաբերյալ հնարավոր չի եղել նաև ստանալ որևէ տեղեկություն հեռախոսազանգերի միջոցով:

Հայցվորը 29.11.2018թ. ՀՀ Ոստիկանապետ Վալերիյ Օսիպյանի անվամբ ուղարկել է կրկնակի գրություն՝ խնդրելով պատասխանել վերոնշյալ գրություններին, որին նույնպես պատասխան չի տրվել:

Արդյունքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան, որը 2019թ-ի հունիսի 20-ին Դատարանի որոշմամբ բավարարվել էր:

ՀՀ Ոստիկանության կողմից ՀՀ վարչական դատարանի որոշման դեմ ներկայացվել էր վերաքննիչ բողոք:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

2021թ.-ի փետվարի 3-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (Դատարան) ավարտվել է տրանսգենդեր անձ Է.Ա.-ի նկատմամբ սպանության փորձի գործով դատավարությունը և նույն օրը դատարանի կողմից հրապարակվել է դատավճիռը:

Տուժողին իրավական և փաստաբանական ծառայություններ էր տրամադրել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն՝ ի դեմս փաստաբան Արա Ղարագյոզյանի:

Դատարանի վճռով ամբաստանյալը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում և դատապարտվեց ազատազրկման 3 տարի, 6 ամիս ժամկետով: Հաշվարկելով անազատության մեջ գտնվելու 2 օրը

ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ նշանակվեց ազատազրկում 3 տարի, 5 ամիս, 28 օր ժամկետով: Փաստաբան Անահիտ Մկրտչյանի կողմից ներկայացվեց հայցադիմումը՝ դրանում առկա փաստական հանգամանքներով և իրավական վերլուծությամբ: Դատաքննության փուլում հնչեցին հայտարարություններ, հարցեր, որոնց սպառիչ պատասխանների համար անհրաժեշտություն առաջացավ դատարանին ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր: Նիստը հետաձգվեց: Հաջորդ դատական նիստը տեղի կունենա 2021թ.-ի ապրիլի 30-ին, ժամը 16:00-ին՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրում: Այնուամենայնիվ, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ ամբաստանյալը ազատվեց հանցագործության համար նշանակված պատիժը կրելուց:

Ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացվեց: Դատավճռով քաղաքացիական հայցը բավարարվեց մասնակիորեն, ամբաստանյալից հօգուտ տուժող Է.Ա.-ի որոշվեց բռնագանձել 140.000 ՀՀ դրամ գումար՝ որպես տուժողի բուժման համար կատարված անհրաժեշտ ծախս, իսկ մնացած մասով քաղաքացիական հայցը թողնվեց առանց քննության՝ տուժողին իրավունք վերապահելով քաղաքացիական հայց հարուցել ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը նշում է, որ ամբաստանյալը իր կատարած արարքի համար համարժեք պատիժ չի ստացել:

Տուժող կողմը քրեաիրավական որակման հետ համաձայն չէ, քաղաքացիական հարցը հարթված չէ, խախտվել է ՄԻԵԿ 6-րդ հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքը և Դատարանի վերոնշյալ որոշումը բողոքարկելու է:

Գործի նախապատմությունը

Տրանս անձ Է. Ա.-ի ծառայություններից օգտվելու նպատակով նրա բնակարան այցելած անձն իմանալով վերջինիս գենդերային ինքնության մասին այրել է բնակարանն ու հեռացել: Է.Ա.-ն ստացել է ծանր մարմնական վնասվածքներ և այրվածքներ: Է. Ա.-ն հրաժարվել է հրաժարվել է իր նախկին փաստաբանից և դիմել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, որը տուժողին տրամադրել է փաստաբանի ծառայություններ՝ ի դեմս Արա Ղարագյոզյանի: Մինչ օրս տվյալ գործով 3 անգամ փոխվել է գործով նախագահող դատավորը, ինչի հետևանքով գործի քննությունը
ամեն անգամ սկսվում էր սկզբից և ավարտին չէր մոտենում: Ամբաստանյալը միջնորդություն է ներկայացրել արագացված դատաքննություն անցկացնելու վերաբերյալ: Մեղադրողի
կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկություն չի ներկայացվել: Չնայած տուժողի
փաստաբանի կողմից ներկայացված առարկությանը և ներկայացրած հիմքերին Դատարանը 2021թ-ի հունվարի 21-ին որոշում է կայացրել արագացված դատաքննության անցկացնելու մասին:

Մեղադրող դատախազի կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկություն չներկայացնելը բազում հիմքերի առկայության պարագայում խոսում է այն մասին, որ պետության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվում սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքությամբ պայմանավորված հանցագործություններին ճիշտ քրեաիրավական որակում տալու հետ կապված:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հետևողական է լինելու գործի արդարացի լուծմանը:

ԴԱՍԸՆԹԱՑ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2021 թվականի մարտի 16-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստում անցնող սպաների համար տեղի ունեցավ վերապատրաստման հերթական դասընթացը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հետ համագործակցությամբ և Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հետ համագործակցությամբ նման ձևաչափով դասընթացներ է կազմակերպում դեռևս 2019 թվականից և այս համագործակցությունը լինելու է շարունակական:

Դասընթացի սկզբում ծրագրի համակարգող Ալինա Միրզոյանը ողջունեց բոլոր մասնակիցներին, ներկայացրեց կազմակերպությունը և գործունեության ոլորտները, դասընթացի նպատակը, թեմաները, փորձագետներին, նաև շնորհակալություն հայտնեց կրթահամալիրին շարունակական համագործակցության ապահովման համար:

Առաջին փորձագետ, իրավաբան Լուսինե Գասպարյանը ներկայացրեց «Մարդու իրավունքներ» թեման, խոսեց մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային օրենսդրությունից, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից, ինչպես նաև անդրադարձավ «Խտրականություն» թեմային:

Դասընթացը շարունակեց մյուս փորձագետ, իրավաբան Շուշան Խնկոյանը, ով խոսեց «Գենդերային հավասարություն» թեմայից՝ ներկայացնելով վիճակագրություն, ոլորտում առկա բացերը, կարգավորման մեխանիզմները:

Դասընթացավարը ներկայացրեց միջազգային փաստաթղթեր, որոնք առնչվում են թեմային՝ հատկապես առանձնացնելով «Ստամբուլյան կոնվենցիան», «Լանզարոտի կոնվենցիան», իրական նպատակները և նրա շուրջ ձևավորված միֆերը: Դասընթացը ամփոփվեց հարց ու պատասխանով, ակտիվ քննարկումներով:

«ԲԱՆԱԿՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ». «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ԱՀԱԶԱՆԳՈՒՄ Է

2021թ-ի մարտի 13-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել ժամկետային զինծառայող Հ.Ա.-ն: Վերջինս հայտնել է, որ ծառայության ընթացքում խնդիրներ է ունեցել զինծառայակից ընկերների հետ, երբ նրանք իմացել են Հ.Ա.-ի սեռական կողմնորոշման մասին: Այնուհետև վերջինիս տեղափոխել են այլ զորամաս:

ՀՀ-ում և Արցախում հայտարարված ռազմական դրության ժամանակահատվածում զորամասում նույն պատճառով կրկին խտրականության է ենթարկվել և գումարտակի հրամանատար, մայոր Տ.Թ.-ի հետ ծագած վիճաբանության համար Ճարտար քաղաքի հարակից ճանապարահատվածում ՀՀ ՊՆ Հադրութի ռազմական ոստիկանության պետի պաշտոնակատար, փոխգնդապետ Գ.Լ.-ն զինծառայողի հասցեին տվել է սեռական բնույթի հայհոյանքներ, լիցքավորել իր մոտ գտնվող ատրճանակը և երկու անգամ կրակել Հ.Ա.-ի ոտքերի աջ և ձախ կողմերը: Դրանից հետո լիցքավորված ատրճանակը պահել է Հ.Ա-ի ճակատի ուղղությամբ ու սպառնացել սպանել: Այնուհետև Գ.Լ.-ն ատրճանակի բռնակով հարվածել է Հ.Ա.-ի քթին, ինչի արդյունքում վերջինս վայր է ընկել, որից հետո բռունցքով հարված է ստացել դեմքին: Գ.Լ.-ի հարվածների հետևանքով Հ.Ա.-ն ստացել է ատամնաշարի և քթի կոտրվածք: Նույն օրը տեղափոխվելով Ստեփանակերտի ռազմական ոստիկանության բաժին, բաժնի ընդունիչ-բաշխիչ խցում Գ.Լ-ն, ընդունիչ-բաշխիչի բաժնի պետը, նույն բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը և հսկիչներից մի քանիսը փայտյա մահակներով ծեծի են ենթարկել Հ.Ա.-ին՝ վերջինիս պատճառելով մարմնական վնասվածքեր:

Հ.Ա.-ն մի քանի օր անցկացրել է խցում:

Նա այլ զորամաս տեղափոխվելուց հետո է միայն հանցագործության մասին հաղորդում ներկայացրել, քանի որ վերջինիս պարբերաբար սպառնացել են:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2 մասի 2 կետի, 309.1 հոդվածի 1-ին մասի, 309.1 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով:

Խստորեն դատապարտում ենք զինծառայողի նկատմամբ սեռական կողմնորոշման հիմքով դրսևորված խտրականությունը և բռությունը:

Հորդորում ենք ՀՀ Կառավարությանը, Պաշտպանության նախարարությանը և ՀՀ ոստիկանությանը շտապ լուծում տալ ստեղծված իրավիճակին, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ զինծառայողի անվտանգությունը ապահովելու և կատարված հանցագործության մեջ մեղավոր անձանց ՀՀ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2021 թվականի մարտի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի (ՏՀԱԽ) հերթական հանդիպումը: ՏԱՀԱԽ-ին անդամակցում են Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող 5 կազմակերպությունների («Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Հանուն հզոր ապագայի» երիտասարդական ՀԿ, «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» իրավապաշտպան ՀԿ) ներկայացուցիչներ և 2 անհատ տրանս* ակտիվիստներ:

Հանդիպման նպատակն էր քննարկել Խմբի աշխատանքները Տրանս* տեսանելիության օրվան ընդառաջ, որը նշվում է ամեն տարի

մարտի 31-ին: Քննարկումների արդյունքում խումբը որոշեց միանալ միջազգային գործընկերների միջոցառումներին, ինչպես նաև նախաձեռնել սեփական մեդիա արշավը: Հստակեցվեցին մեդիա արշավի նպատակները, խնդիրները, հիմնական լսարանը, բաժանվեցին աշխատանքները Խմբի անդամների միջև:

Հանդիպումը անցավ չափազանց ակտիվ և խանդավառ մթնոլորտում: Խմբի անդամները պատրաստակամություն հայտնեցին նույն ոգով շարունակելու աշխատանքները և նպաստելու Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրների լուծմանը, իրավունքների պաշտպանությանը և տեսանելիության բարձրացմանը:

ՄԻԱՎ-Ը ԴԱՏԱՎՃԻՌ ՉԷ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ:

2021 թվականի մարտի 26-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել էր «ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» խորագրով հանդիպում-քննարկումը: Հանդիպմանը ներկա էին ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն»-ի, տեղական հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համայնքահեն ՀԿ-ների և համայնքի ներկայացուցիչներ, ովքեր բարձրաձայնեցին իրենց անհանգստացնող հարցերը և ստացան դրանց սպառիչ պատասխանները ոլորտային փորձագետների և մասնագետների կողմից: Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով ողջունեց ներկաներին և մաղթեց արդյունավետ քննարկում: Ներկայացան զեկուցողներ Անահիտ Հարությունյանը և ՀԿ-ի իրավաբան Լուսինե Գալստյանը:

Անահիտ Հարությունյանը սկզբում ներկայացրեց «ՄԻԱՎ-ի նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ արյան արագ հետազոտության ծառայությունների տրամադրումը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ զեկույցը, այնուհետև ՀՀ ազգային բյուջեում SUS և տրանս* անձանց տրամադրվող սոցիալական և առողջապահական ծառայությունների բացերը հասցեավորող ադվոկացիոն ճանապարհային քարտեզը, որը մշակվել էր «Բյուջետային անալիզը որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի շրջանակներում Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումի մաս կազմող Վնասի նվազեցման եվրասիական ասոցիացիայի (EHRA) ֆինանսական աջակցությամբ, քաղաքացիական հասարակության ցանցերի Ռոբերտ Կարրի հիմնադրամի (RCF) ֆոնդերի հաշվին:

Իրավաբան Լուսինե Գասպարյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման (PrEP, PEP) միջոցների վերաբերյալ տեղական և միջազգային ուղեցույցների համեմատական զեկույցը:

խոսվեց ՄԻԱՎ-ի նախակոնտակտային և հետկոնտակտային միջոցների, դրանց ֆինանսավորման, տարիքային սահմանափակման և հնարավոր ազդեցությունների մասին: Բանախոսների կողմից ներկայացրած նյութերից հետո տրվեցին համապատասխան հարցեր, որոնք ստացան պատասխաններ: Քննարկման ընթացքում մասնագետները փոխանակեցին իրենց ունեցած փորձը, ինչպես նաև կիսեցին քննարկումից ստացած իրենց տպավորությունները:

Առողջապահության նախարարությունը նշեց, որ աշխատում է բարձրաձայնված խնդիրների լուծման ուղղությամբ և արդեն իսկ որոշակի առաջընթաց է գրանցվել այդ ոլորտում:

Քննարկման ընթացքում շեշտվեց նաև ՄԻԱՎ-ի նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման միջոցների մասին իրազեկվածության բացը Հայաստանում:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նշեց, որ այս բացը լրացնելու նպատակով տպագրվել և բաժանվել են կրթատեղեկատվական նյութեր և նկարահանվել իրազեկությունը բարձրացնող սոցիոլովակներ, որոնք ցուցադրվեցին նաև հանդիպման ավարտին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն արդեն երկար տարիներ հանդիսանում է իրազեկող աղբյուր ՄԻԱՎ-ի, դրա նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման աղբյուրների վերաբերյալ և տարեցտարի փորձում է բարձրացնել իրազեկության մակարդակը առավել խոցելի անձանց շրջանում: Այս հանդիպման իրականացումը ևս հանդիսանում է ՀԿ-ի նպատակների արտացոլում և արտահայտում է դրա գաղափարախոսությունը:

Հանդիպման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին միմյանց ձևավորած համագործակցությունների համար և պայմանավորվածություն ձեռք բերեցին հետագա զարգացումները միասնական իրականացնելու նպատակով:

Հանդիպում-քննարկումը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Շահերի պաշտպանություն և իրազեկության բարձրացում՝ ՀՀ հասարակության խոցելի խմբերի առողջության իրավունքի իրականացումն ապահովելու համար» ծրագրի շրջանակներում, Gilead Sciences կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՎ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սիրով տեղեկացնում ենք, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2021թ.-ի ապրիլի 1-ից մեկնարկում է «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության ՄԻԱՎ-ին հակազդման ազգային ծրագրում չներառված խոցելի խմբերի շրջանում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում Գլոբալ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում չներառված ռիսկային խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելմանը և տեղեկատվության բարձրացմանը, ջատագովել տվյալ ծրագրերում նշված խմբերի ներգրավման, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում շահառու խմբերի համար ՄԻԱՎ-ի վերաբերյալ ծառայությունների հասանելիության ապահովման համար:

Իրականացման վայր՝

- *Երևան*
- *Արագածոտնի մարզ*
- *Արարատի մարզ*
- *Արմավիրի մարզ*
- *Գեղարքունիքի մարզ*
- *Լոռու մարզ*
- *Կոտայքի մարզ*
- *Շիրակի մարզ*
- *Սյունիքի մարզ*
- *Տավուշի մարզ*
- *Վայոց Ձորի մարզ*

Շահառու խմբեր՝

- *Նախկին դատապարտյալներ;*
- *Երիտասարդներ;*
- *Կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող կանայք (ԿՍԿ);*
- *Տրանս անձինք:*